ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 04

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2018թ. դեկտեմբերի 21-ին ժամը 15:00-ի կայացած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Դ. Գևորգյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետ***
Ա. Սարգսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Ա. Նիկողոսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Գ. Աթանեսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Հր. Գևորգյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար***

Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմը, մարզի բժշկական հաստատություններին տնօրենները, Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ամփոփիչ ցուցանիշների մասին /զեկ. մարզպետի տեղակալ Գ. ԱԹԱՆԵՍՅԱՆ/:
2. Մարզի համայնքներում 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառման աշխատանքների կազմակերպման մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:
3. 2018 թվականին տարերային աղետներից տուժած համայնքների հողօգտագործողներին մասնակի փոխհատուցում տրամադրելու գործընթացի մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:
4. Համայնքներին սուբվենցիաների տրամադրման և ծրագրերի իրականացման գործընթացի մասին (զեկուցողներ՝ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ, քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ):
5. << Իմ քայլը հանուն Արագածոտնի >> միջոցառման հետ կապված կազմակերպչական հարցերի մասին (զեկ. մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ):
6. <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 8-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ հոդվածների պահանջների կատարման գործընթացի մասին (զեկուցողներ՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. ԱՍԱՏՐՅԱՆ, մարզպետի խորհրդական Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ):
7. ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ամփոփիչ խոսքը և Ամանորյա շնորհավորանքն ուղղված մարզի խորհրդին:

Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշերի մասին զեկուցեց մարզպետի տեղակալ Գառնիկ Աթանեսյանը: Ներկայացնելով սեփական եկամուտներ հավաքագրած առավել բարձր և ցածր համայնքները՝ նա նշեց, որ վիճակագրությունը փաստում է, որ ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների անունները կրկնվում են յուրաքանչյուր տարի: Մարզպետը նշեց, որ համայնքների սեփական եկամուտների պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Մարզպետը համայնքների ղեկավարներին **հանձնարարեց** ՀՀ օրենսդրության շրջանակներում իրականացնել բոլոր անհրաժեշտ միջոցառումները եկամուտների հավաքագրման գործընթացը պատշաճ կազմակերպելու և դրական արդյունք ապահովելու համար:

Ներկայացվեց համայնքներում 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառման աշխատանքների կազմակերպման կարգը: Նշվեց նաև, որ 2018 թվականի ընթացքում տարերային աղետներից 50-100 տոկոսով տուժած հողօգտագործողներին կառավարության կողմից մասնակի փոխհատուցում է տրվելու, և համապատասխան համայնքների ղեկավարներին հանձնարարվեց հետևողական լինել գործընթացի իրականացման ուղղությամբ:

Քննարկվեց համայնքներին սուբվենցիաների տրամադրման և ծրագրերի իրականացման գործընթացի մասին հարցը: Մարզպետը նշեց, որ հետևողական պետք է լինել հատկապես սուբվենցիոն ծրագրերի որակական հատկանիշների ուղղությամբ, քանզի ամենափոքր թերությունների առկայության դեպքում աշխատանքները չեն կարող ավարտուն լինել:

Մարզպետը **կարևորեց** 2019 թվականի առաջին կիսամյակում կայանալիք «Իմ քայլը հանուն Արագածոտնի» միջոցառման նշանակությունը: Միջոցառմանը ներկա են լինելու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հանրապետությունում և արտերկրում բնակվող բազմաթիվ ներդրողներ: Համայնքի ղեկավարը պարտավոր է տիրապետել իր համայնքի ներուժին և ըստ այդմ իմանալ, թե ներդրումային ծրագրերի ինչպիսի իրատեսական հնարավորություններ կան: Ժողովուրդը հույսեր է կապում կառավարության հետ, որտեղ նաև մեծ անելիքներ ունեն համայնքապետերը:

Անդրադառնալով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարմանը, մարզպետը նշեց, որ համայնքապետերը պարտավոր են իրենց գործունեության, մասնավորապես սեփական եկամուտների հավաքագրման և ծախսերի մասին հաշվետվություն ներկայացնել բնակիչներին՝ դրանով ապահովելով նրանց մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների կառավարմանը: Նա խիստ կարևորեց համայնքների սանիտարական մաքրման և աղբահանության կազմակերպումը և հորդորեց հարցին մոտենալ ամենայն պատասխանատվությամբ:

Վերջում ամփոփելով մարզխորհրդի նիստը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետը շնորհավորեց ներկաների գալիք տարին՝ ցանկանալով բարեկեցություն ընտանիքներին և խաղաղություն Հայոց աշխարհին:

Մարզպետ՝ **ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ**